

Ե. Գ. Հ Ո Ւ Խ.

**ԼԵՐԱԿԻ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ.**

Ժ. Լէբրոկի աշխատութեան<sup>1)</sup> մէջ բաւական փաստեր են գտնւում, որոնք մասամբ հաստատում են հասարակական և քաղաքական զարգացման արև հայեացքը։ Իւր ժամաք կը թուռթեան ժագումը<sup>2)</sup> աշխատութեան մէջ Լէբրոկ կողմնակից է նրանց, որոնք ընդունում են մի շըրջան, ուր ազգակցութիւնը կանացի պայտազատութեամբ է որոշվում, բայց նա մերժում է Բախոֆէնի տեսութիւնը<sup>3)</sup> կնոջ հասարակական գերիշխանութեան մասին։ Սրանով բնորոշում է Լէբրոկի տեսութիւնը։ Ցիրաւի, այս հեղինակը, ալիմեան վալենիների վրայ հիմնուելով՝ նախնական մարդուն համարում է կոպիտ և թանձրաբարոյ, զուրկ մի որեւէ գաղափարից։ ճշմարիտ ցանկութիւնից, քնքոյշ զգացմունքից։ Ենա այնքան ստոր վիճակի մէջ է գտնւում, ասում է նա, որ մենք հազիւ կարող ենք այն երևակալել<sup>4)</sup>։ Այսպիսի հոգեկան պայմաններում, երբ նախնական մարդը գտնւում էր կատարեալ տգիտութեան մէջ, զուրկ էր որեւէ բարոյական սանձից և մղւում էր անզուսպ կրքերից։ Նրա հաստատութիւններն ես նիւթական և կոպիտ բնաւորութիւն են կրում։ Ամուսնութիւնը անծանօթ է, սէրը որպէս զգացմունք՝ գոյութիւն չունի և սեռական յարաբերութիւնը զաւտ նիւթական յարաբերութիւն է, առանց էթիկական կողմի։ Հասարակական կեանքը այն ժամանակ մի բացարձակ կոմմունիզմ է ներկայացնում և սեռական յարաբերութիւնները տեղի են ունենում մի կատարեալ խառնակեցիկ դրութեան մէջ։ Սկզբում երեխան տոհմի որդին է. տոհմն է կնոջ

<sup>1)</sup> Les origines de la civilisations.

<sup>2)</sup> Անդ. եր. 5.

<sup>3)</sup> Անդ. եր. 9.

<sup>4)</sup> Անդ. եր. 9.

սեպհականատէրը և ամէն մի փորձ, որ ձգտում է առանձնացնել կնօջն ու երեխային՝ մի ոճիր է խմբի նիւթական քարձը իշխանութեան դէմ։ Այս բոլոր կէտերում մեծ տարքերութիւն չկայ Լէրբոկի և վերև լիշտուած մի քանի գրողների մէջ, բայց անմիաբանութիւնը նրանումն է կալանում, որ սա մերժում է կնօջ քաղաքական և հասարակական գերեշխանութիւնը։ Լէրբոկ անկատակած ընդունում է, որ խառնակեցիկ դրութեան խմբերը ստորաբաժանուելով և սեռական յարաբերութիւնները մասնաւորուելով ազդեցութիւն են ունենում հասարակութեան զարգացման վրայ Բայց ընդունում է նաև ոլժը, կոպիտ իշխանութիւնը՝ որպէս քանդող տարբի Շան, առում է նա, բազմաթիւ, շատ լաւ փաստեր, որոնք կարող են մեզ ապացուցանել, որ սկզբում ամուսնութեան մէջ գոյութիւն չէ ունեցել որևէ կրօնական կամ հասարակական նկատում և փոխազարձ սէրբ կամ նոյն իսկ համակրանքը չեն եղել. փոխազարձ համաձայնութիւնն աւելորդ է համարուել և ամուսնութիւնը կատարուել է ոչ թէ մի կողմի սիրոլ խօստովանութեամբ և միւս կողմի հաւանութեամբ, այլ մէկի բռնի ուժով, իսկ միւսի ճարահատեալ հպատակուելով \*):

Ահա այս ոլժն է, որ կղզիացնում է գերդաստանը համայնակեցութեան մէջ, նա է՛ որ հասարակական խառն և անորոշ դրութեան ժամանակ տարբերում և մասնաւորում է զանազան տարբերը, որոնք կոչուած են կազմելու ներքին, անկախ խումբ։ Լէրբոկը բացատրում է, թէ ինչպէս ամուսնական զանազան ձևերի մէջ, որոնք փոքր առ փոքր երեւան են գալիս, միշտ մի բան կայ, որ ենթադրել է տալիս ուժի գործադրութիւնը։ Նա գեռ աւելի առաջ է գնում և ասում. «Այս նիւթական խիստ ոլժը, որ իրապէս գործադրում է նկատում է որպէս մի էական գաղափար, այնպէս որ նորն իսկ այն ժամանակ, երբ այդ ոլժը, այլ ևս անհրաժեշտ էլ չէ՝ ալնուամենայնիւ գործադրում է որպէս

\*) Les origines de la civilisation. Եր. 96.

նշանակս, ինչպէս այս նկատում է առևանգմամբ ամուսնութեան մէջ։ Սրանից հետեւում է, որ կինը միշտ ստորադրուած դրութիւն է ունեցել, որովհետև նա մի թոյլ էակ է։ միայն ուժի շնորհիւն է, որ կինը մի տոհմի ձեռքից անցնում է մի մարդու ձեռքը, որ նրան տիրում է։ որպէսզի այս փոխանցումը կարողանայ կատարուել՝ պէտք է որ կինը հանուի այնպիսի տոհմից, որին չէ պատկանում տղամարդը (առևանգութիւն, օտարացեղ ամուսնութիւն) կամ եթէ այս բացառիկ տիրապետութիւնը կատարում է միևնույն տոհմի անդամների մէջ՝ այն ժամանակ տղամարդը պէտք է տուժինք տալ, կնոջը գնէ կամ հատուցում վճարէ։

Լէրբոկն ասում է. «Քանի մենք քաղաքակրթութեան սանդուխով ներքե ենք իջնում՝ այնքան գերդաստանի կարեւորութիւնը նուազում և տոհմինը մեծանում է» \*), ֆիրօնէօլոն և ուրիշները նոյնպէս համարեա նորնն են ասում։ Բայց Լէրբոկի կարծիքով տոհմը գերդաստանի է փոխում ոչ թէ արիւնակցութեան սկզբունքով, այլ ոյժի շնորհիւ։ Ազգակցական բառերի քննութիւնը հաստատում է, որ սկզբում տոհմն է տիրապետել և թէպէտ նրանք, ամուսնական սովորութների համեմատ, ազգակցական կապեր են արտադայտում՝ այնուամենալինիւ նրանց գաղափարները հիմնուած են տոհմի կազմակերպութեան վրայ։ Այս ապացուցւում է Հավակեան կղզիների սիստեմով, ուր հայր և մայր տերմինները բոլորովին չկան, և համարւում է, թէ ամեն մի երեխայ շատ հայրեր ու մայրեր ունի։ Մի խօսքով եթէ հետեւնք Լէրբոկի ցուցումներին՝ նախնական մարդու վերաբերեալ փաստերի ուսումնասիրութեամբ կարող ենք ապացուցանել, որ նախնական կազմակերպութիւնը չէ եղել զուտ ընտանեկան և ոչ էլ հիմնուած է եղել արիւնակցութիւնից առաջացած սիրոյ վրայ, այլ եղել է մի այնպիսի տարրական կազմակերպութիւն, որի մէջ գերդաստանն իրապէս զուութիւն չէ ունեցել, և որի մէջ թէկուզ կապը արեան կա-

\* ) Անդ. եր. 99.

ալակցութիւնն է՝ բայց նիւթեկան ոյժն է որոշել հասարակութեան ներքին հիւսուածքը։ Այս գէպօւմ կարելի է ընդունել, որ տոհմը մի համարնակեցութիւն է եղել, հիմնուած իսկապէս արեան կապի վրայ, բայց համարնական շահերն են որոշել նրա բոլոր հիմնարկութիւնների զարգացումը։

Թէ Լէբբոկի այս տեսութիւնը հասարակութեան ծագման մասին որ աստիճան կարևորութիւն ունի՝ այս մէկ կողմ գնենք։ Միայն երբ նա ոյժը նկատում է որպէս մի բան, որ արենակցական կապի ներգործելով՝ ազգեցութիւն ունի հասարակական կազմակերպութեան մէջ, այն ժամանակ ուրեմն նա հէնց սկզբից ենթադրում է պետութեան նիւթական տարրի գոլութիւնը։ Պէտք էր որ այս ինքնուրուն հայեացքը որոշ կերպով արտալայտուած լինէր։

Թարգմ. Փրանս. Ե. Լալայնանց

(Կը շարունակուի)

